Լրացուցիչ համաձայնագիր թիվ 2

27.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-88-01-23
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան

03 .08.2023թ.

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Գևորգ Չամչանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ Լիազորություններ վերապահելու մասին 10.04.2023թ.-ի թիվ 979-Ա հրամանով, և Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Արման Ժամհարյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 27.01.2023թ.-ին կնքված թիվ PDU-88-01-23 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 24 222 600 (քսանչորս միլիոն երկու հարյուր քսաներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 27 322 600 (քսանյոթ միլիոն երեք հարյուր քսաներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 27.01.2023 թ.-ին կնքված թիվ PDU-88-01-23 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝	Պատվիրատու՝
«Հայփոստ» ՓԲԸ ք.Երևան, 0002, Սարյան 22 ՀՎՀՀ՝ 02507464 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 1930003703156000 Հեռ.՝ (010) 514-548	Տավուշի մարզի առաջին ատյանի ԸԴ ք. Իջևան, Նալբանդյան 1/1 ՀՎՀՀ՝ 02583241 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ՝ 900371001281 Հեռ.՝ (0263) 4-08-41
Կոմերցիոն տնօրեն՝ Գևորգ Չամչան---------- /ստորագրություն/	Աշխատակազմի ղեկավար Արման Ժամհարյան ---------- /ստորագրություն/